ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2020/41

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2847-2020 գրությամբ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 21.02.2020թ. թիվ 01/61-15017Հ գրության հիման, վրա 27.02.2020թ. թիվ 26/26-1/2847-2020 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «**Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

«Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի կողմից Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/41 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 10:40-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Երևանի քաղաքապետարանը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.02.2020թ. թիվ 01/61-15017Հ գրությամբ հայտնել է, որ հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 12.06.2019թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2», 08.05.2019թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» և 01.07.2019թ. կնքված թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» գնման պայմանագրերի 2.1.7.1 կետի բ) ենթակետի պահանջները՝ Երևանի քաղաքապետարանը 2020թ. փետրվարի 10-ին միակողմանի մասնակի լուծել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2», թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» և թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» գնման պայմանագրերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2020/41 ընթացակարգի շրջանակներում 03.03.2020թ. ժամը 11:40-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ՆԳ-2020/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ՆԳ-2020/41 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 12.06.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2», 08.05.2019թ.՝ թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» և

01.07.2019թ.՝ թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» ծածկագրերով ապրանքի մատակարարման պայմանագրերը (հետայսու նաև՝ Պայմանագրեր), որոնց համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին ուղղված 10.02.2020թ. թիվ 01/61-2251 գրությամբ Երևանի քաղաքապետարան հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրերի 2.1.7-րդ կետի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությունը՝ 2020թ. փետրվարի 10-ին միակողմանի մասնակի լուծել է թիվ Պայմանագրերը:

3. Պատվիրատուի կողմից 10.02.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2», «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» ծածկագրերով պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2847-2020 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 21.02.2020թ. թիվ 01/61-15017Հ գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

1. Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 12.06.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքները, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 57852 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը՝

Ապրանքի անվանում	Ընդհանուր քանակ	Ընդհանուր գին	Կատարման ենթակա քանակ	Կատարման ժամկետ
Ավել	70 հատ	41160	40	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.
			20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.
			10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 25.12.2019թ.
Մեխ	1 կգ	660	1	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.
Մեկուսիչ ժապավեն	20 հատ	2400	10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.
			5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.
			5	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 25.12.2019թ.
Ջրի ծորակ	6 հատ	10800	2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.
			2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.

			2	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 25.12.2019թ.
Սպիտակեցնող հեղուկ /ժավել/	40 լիտր	2832	20	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.
			10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.06.2019թ.
			10	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 25.12.2019թ.

Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված 10.02.2020թ. թիվ 01/61-2251 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 12.06.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ, այն է՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 25.12.2019թ. մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն չի իրականացրել 10788 ՀՀ դրամի տնտեսական ապրանքների մատակարարում:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7-րդ կետի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությունը՝ 2020թ. փետրվարի 10-ին միակողմանի մասնակի լուծել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 10.02.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/90-2» ծածկագրով պայմանագիրը միակողմանի մասնակի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է***

պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ***Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 <u>օրից ավելի</u>:***

Այսպիսով՝ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ն իր և Երևանի քաղաքապետարանի միջև 12.06.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում մատակարարել Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված տնտեսական ապրանքները, սակայն գործի, մասնավորապես՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի և պայմանագրի արդյունքը գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերալ թիվ 1 և թիվ 2 ակտերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ Ընկերությունը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ, ստանձնած պարտավորությունները կատարել է մասնակի, այն է՝ 70 հատ ավելի փոխարեն մատակարարել է 60 հատ, 20 հատ մեկուսիչ ժապավենի փոխարեն՝ 15 հատ, 6 հատ ջրի ծորակի փոխարեն՝ 4 հատ և 40 լիտր սպտակեցնող հեղուկի /ժավել/ փոխարեն՝ 30 լիտր: Արդյունքում ապրանքների մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը:

2. Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման

ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքները, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 14760 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը՝

Ապրանքի անվանում	Ընդհանուր քանակ	Ընդհանուր գին	Կատարման ենթակա քանակ	Կատարման ժամկետ
Կարիչի ասեղ /փոքր/	100 տուփ	5640	75 տուփ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 31.08.2019թ.
			25 տուփ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 25.12.2019թ.
Սոսինձ	40 հատ	9120	40 հատ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.07.2019թ.

Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված 10.02.2020թ. թիվ 01/61-2251 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 01.07.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել, այն է՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 25.12.2019թ. մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն չի իրականացրել 14760 ՀՀ դրամի տնտեսական ապրանքների մատակարարում:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7-րդ կետի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությունը՝

2020թ. փետրվարի 10-ին միակողմանի լուծել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 10.02.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/126» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>5 օրից ավելի,</u>

Այսպիսով՝ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ն իր և Երևանի քաղաքապետարանի միջև 01.07.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում մատակարարել Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված տնտեսական ապրանքները մատակարարելու պարտականությունը, սակայն արձանագրում եմ, որ Ընկերությունը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ, ընդհանրապես չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները և ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 5 օրից ավելի, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

3. Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 08.05.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» ծածկագրով ապրանքի մատակարարման

պայմանագիր, որի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված տնտեսական ապրանքները, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի գինը սահմանվել է 1290 ՀՀ դրամ:

Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է հետևյալը՝

Ապրանքի անվանում	Ընդհանուր քանակ	Ընդհանուր գին	Կատարման ենթակա քանակ	Կատարման ժամկետ
Թղթապանակ /ռեգիստրատոր/	20 հատ	1290	15 հատ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 30.09.2019թ.
			5 հատ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 20 օրացույցային օր հետո մինչև 25.12.2019թ.

Երևանի քաղաքապետարանն Ընկերությանն ուղղված 10.02.2020թ. թիվ 01/61-2251 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ի միջև 08.05.2019թ. կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» ծածկագրով ապրանքի մատակարարման պայմանագիր, որի շրջանակներում Ընկերությունը ստանձնած պարտավորությունները չի կատարել, այն է՝ Ընկերությունը պարտավոր էր մինչև 25.12.2019թ. մատակարարել Պայմանագրի հավելված 1-ով սահմանված ապրանքները, սակայն չի իրականացրել 1290 ՀՀ դրամի տնտեսական ապրանքների մատակարարում:

Ամփոփելով՝ Պատվիրատուն հայտնել է, որ հիմք ընդունելով վերը նշված հանգամանքը և Պայմանագրի 2.1.7-րդ կետի 2.1.7.1 ենթակետի բ) պարբերությունը՝ 2020թ. փետրվարի 10-ին միակողմանի լուծել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» պայմանագիրը:

Պատվիրատուի կողմից 10.02.2020թ. www.gnumner.am տեղեկագրում հրապարակվել է թիվ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/40-1» ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն վաճառող կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) Մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են <u>10 օրից ավելի,</u>

Այսպիսով՝ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ն իր և Երևանի քաղաքապետարանի միջև 08.05.2019թ. կնքված պայմանագրով ստանձնել է սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում մատակարարել Պայմանագրի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված տնտեսական ապրանքները, սակայն արձանագրում եմ, որ Ընկերությունը Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ, ընդհանրապես չի մատակարարել Պայմանագրով նախատեսված ապրանքները և ապրանքի մատակարարման ժամկետը խախտվել է 10 օրից ավելի, որի հետևանքով Ընկերությունը թույլ է տվել Պայմանագրի էական խախտում, որն էլ իր հերթին հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման:

Հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.02.2020թ. թիվ 26/26-1/2847-2020 գրությամբ «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Ինֆինիտի գրուպ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**